ՌԴ նոր գազային ռազմավարությունը և «*Զանգեզուրի միջանցքը*»

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 13.09.2024 թ.[1]

Ուկրաինայի նախագահ Վ. Զելենսկին 27.08.2024 թ. պաշտոնապես հայտարարել է, որ Կիևն այլևս մտադիր չէ երկարաձգել ուկրաինական տարածքով ռուսաստանյան գազի տարանցման մասին պայմանագիրը, որի ժամկետներն ավարտվում են 2024 թ. վերջին: «*Ոչ ոք չի երկարաձգելու Ռուսաստանի հետ պայմանագիրը: Այստեղ մենք վերջակետ կդնենք: Ինչ վերաբերում է այլ ընկերություններից գազի տարանցմանը, եթե շարունակվի եվրոպական մեր գործընկերների պահանջարկը, ապա այդ ժամանակ մենք այլ հարցեր կքննարկենք*», – մասնավորապես ասել է նա: Ուկրաինացի առաջնորդի վերջին մտքի վերաբերյալ պարզաբանումներն ստացվել են նրա աշխատակազմից և Ուկրաինայի ճյուղային կառույցներից: Այնտեղ հայտարարել են, որ եթե եվրոպական երկրները դրա կարիքն ունենան, ապա Կիևը պատրաստ է բաց թողնել Ռուսաստանի տարածքով արտամղվող միայն ղազախստանյան և ադրբեջանական գազը:

Այսպիսով, Ռուսաստանը փաստացի զրկված է դեպի Արևմտյան և Կենտրոնական Եվրոպա գազի վերջին երթուղուց այն բանից հետո, երբ «Հյուսիսային հոսքերը» պայթեցվեցին և դադարեցվեց «Յամալ–Եվրոպա» խողովակաշարի երկայնքով գազի մղումը: Առայժմ գործող մյուս երկու՝ «Թուրքական հոսք» և «Երկնագույն հոսք», երթուղիները նախատեսված են ռուսաստանյան գազը Թուրքիային և Հարավային ու Հարավ-Արևելյան Եվրոպայի երկրներին մատակարարելու համար: Դրանց պայմանագրային բազան և հզորությունը Մոսկվային թույլ չեն տալիս արտամղել Գերմանիայի, Ֆրանսիայի և եվրոպական այլ հիմնական գնորդների համար նախատեսված ծավալները: Իսկ դրանք կազմում են դեպի Եվրոպա ռուսաստանյան արտահանման առյուծի բաժինը: Այսպես, 2020-ից սկսած Ռուսաստանը պարտավորվել է Ուկրաինայի միջով Եվրոպա առաքել 225 մլրդ խորանարդ մետր գազ, որից 65 մլրդ-ն՝ առաջին տարում և 40-ական մլրդ՝ առաջիկա 4 տարում:

Այդ ծավալների վաճառքից ստացվող արժութային մուտքերը կենսականորեն կարևոր նշանակություն ունեն Ռուսաստանի «պատերազմող» տնտեսության համար: Իսկ հիմա, ուկրաինական տարանցման արգելափակմամբ, Մոսկվան ոչ միայն կկանգնի ծավալուն ֆինանսա-տնտեսական դժվարությունների առջև, այլև՝ կզրկվի ԵՄ առանցքային երկրների՝ Գերմանիայի և Ֆրանսիայի վրա քաղաքական ազդեցության վերջին լծակներից, ինչը ծայրաստիճան բացասաբար կանդրադառնա Ուկրաինայի շուրջ տեղի ունեցող գործընթացների հետագա զարգացման վրա: Այդպիսով, ՌԴ-ի հետ գազի տարանցման մասին պայմանագրի երկարաձգումից հրաժարվելու վերաբերյալ ուկրաինական իշխանությունների որոշումը լույս է սփռում Վ. Պուտինի՝ 18.08.2024 թ. պետական այցով հանկարծակի Բաքու ժամանման վրա: Ամենայն հավանականությամբ

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 03.09.2024 թ.:

կարելի է ենթադրել, որ Վ. Պուտինի և Ի. Ալիևի բանակցությունների գլխավոր թեման եղել է դեպի Եվրոպա ռուսաստանյան գազի արտահանման տարբերակների ուսումնասիրման հարցը, ինչպես նաև նույն այդ Ուկրաինայի տարածքով ռուսաստանյան ածխաջրածինների, թեև «ադրբեջանական պիտակավորմամբ», արտահանման հնարավորությունները:

Պուտինի այցը կայացել էր Վ. Զելենսկու պաշտոնական հայտարարությունից 10 օր առաջ, ինչը նշանակում է, որ Կրեմլում արդեն տեղեկացված էին Կիևի կողմից պատրաստվող որոշման մասին: Ըստ երևույթին, Մոսկվայում, այնուամենայնիվ, մինչև վերջին պահը հուսով էին, թե կարող է կայանա «տարանցման պայմանագրի» երկարաձգումը և նորից Բաքվի հետ ծանր առքուվաճառքի անհրաժեշտություն չի առաջանա: Դեռևս հուլիսին ՌԴ փոխվարչապետ Ալեքսանդր Նովակը հայտարարել էր, թե «*Ռուսաստանը պատրաստ է ուկրաինական տարածքով գազ մատակարարել նաև 2024 թ. հետո*», և թե այդ առումով այժմ ամեն ինչ կախված է Կիևի որոշումից: Իսկ երբ հայտնի դարձավ պայմանագիրը երկարաձգելուց հրաժարվելու վերաբերյալ ուկրաինական իշխանությունների վերջնական որոշման մասին, և խնդիրը միայն Վ. Զելենսկու հայտարարությունն էր մնացել, Կրեմլը կազմակերպեց ՌԴ ղեկավարի հապշտապ այցը ԱդրՀ:

Այդտեղ Վ. Պուտինի գլխավոր խնդիրն էր Ի. Ալիևին համոզել, որ դեպի ԵՄ ռուսաստանյան ածխաջրածինների այլընտրանքային տարանցումը կազմակերպելու համար անհրաժեշտ է քաղաքական որոշում ընդունել Ադրբեջանի էներգետիկ լոգիստիկան և գազային ենթակառուցվածքը ներկայացնելու վերաբերյալ: Հետևապես, հենց այդ բանակցային փաթեթի հետ էր կապված ՌԴ արտաքին գործերի նախարար Ս. Լավրովի հայտարարությունը, այդպես կոչված, «*Զանգեզուրի միջանցքի*» հաղորդակցությունն ապաշրջափակելու՝ Հայաստանի «*պարտավորությունների*» մասին: Կարելի է ենթադրել, որ այժմ Մոսկվան և Բաքուն հենց այդ հայկական մարզն են որպես միակ խոչընդոտ դիտարկում դեպի Թուրքիա և այնտեղից՝ Կենտրոնական ու Արևմտյան Եվրոպա ռուսաստանյան նոր գազային երթուղու կառուցման վերաբերյալ արդեն պայմանավորված ծրագրի կենսագործման համար: Ակնհայտ է, որ Մոսկվան համարում է, թե Վրաստանը *ապրիորի* չի կարող այդ երթուղու այլընտրանք դառնալ, քանզի գործող իշխանությունը՝ ի դեմս «Վրացական երազանքի», որն աշխարհաքաղաքական չեզոքության է ձգտում, ի վիճակի չէ երաշխավորել անխափան տարանցումն իր տարածքով: Իսկ եթե աշնանային ընտրությունների արդյունքում Թբիլիսիում իշխանության գա ներկայիս ընդդիմությունը, որին ակտիվ պաշտպանում է Արևմուտքը, ապա վրացական տարբերակն ինքնաբերաբար կվերանա:

Այն մասին, որ Բաքվի հետ Մոսկվայի պայմանավորվածությունները կայացել են, կարող են վկայել Կրեմլի և ՌԴ ԱԳՆ լավատեսական արձագանքները Վ. Պուտինի՝ Բաքու կատարած այցի և ռուսալեզու թուրքական ՋԼՄ-ներում հաճախակի դարձած

հրապարակումները Եվրասիա մայրցամաքում Թուրքիայի՝ որպես գլխավոր գազային հանգույցի վերածվելու առնչությամբ Մոսկվայի և Անկարայի միջև բանակցությունների վերաբերյալ: Վերջինից հետևում է, որ Կրեմլը՝ հանձին Թուրքիայի, վերջնականապես կատարել է իր ընտրությունը, թեկուզ դեռ մեկ ամիս առաջ ռուսաստանյան ԶԼՄ-ները և վերլուծաբաններն աշխուժորեն քննարկում էին իրանական հարթակում արտամայրցամաքային գազային առևտրի կենտրոնացման տարբերակը:

Վերը բերված տվյալների կապակցությամբ հասկանալի է դառնում, թե Մոսկվան ինչու է վերստին սկսել նախաձեռնողականություն դրսևորել 09.11.2020 թ. փաստորեն չգործող եռակողմ պայմանագրի «մասնակի վերակենդանացման» խնդրում, որը, Ռուսաստանի կարծիքով, կարող է իրավական հիմք հանդիսանալ Սյունիքով միջանցքի զիջման հարցը Հայաստանին պարտադրելու համար: Հավանական է թվում, որ Բաքվում Լավրովի հայտարարությունից հետո այդ թեման նախագահ Պուտինը քննարկել է նաև Ն. Փաշինյանի հետ 23.08.2024 թ. կայացած հեռախոսազրույցի ընթացքում: Ըստ Կրեմլի և ՀՀ կառավարության հաղորդագրությունների՝ երկու պետությունների առաջնորդները քննարկել են հայ-ադրբեջանական բանակցությունները կրկին ռուսաստանյան հարթակ վերադարձնելու հնարավորությունը: Եթե հաշվի առնենք, որ Ռուսաստանը, վերստին իրեն որպես միջնորդ առաջարկելով, ցանկանում է գործընթացի իրավական և քաղաքական հիմք ընդունել 09.11.2020 թ. եռակողմ փաստաթուղթը և դրանում, Մոսկվայի տեսանկյունից, «*հաղորդակցությունների ապաշրջափակման*» մասին «*սևով սպիտակի վրա գրված*» թերակատարված է միայն մի կետ, ապա պարզ է դառնում, որ Կրեմլին, գլխավորապես, հետաքրքրում է Սյունիքով անցնող «*միջանցքի*» նկատմամբ ռուսաստանյան վերահսկողության հաստատման հնարավորությունը: Հավանական է, որ հենց դա է Վ. Պուտինը քննարկել իր ադրբեջանցի գործընկեր Ի. Ալիևի հետ, իսկ մի քանի օր անց՝ հեռախոսային զրույցի ընթացքում, Հայաստանի վարչապետ Ն. Փաշինյանին, ըստ էության, առաջարկել է համաձայնել «*միջանցքի*» տրամադրմանը ռուս-ադրբեջանական պայմաններով:

Կարելի է ենթադրել, որ ՌԴ-ն և ԱդրՀ-ն համաձայնեցրել են, որ Մոսկվան կստանձնի Երևանի դիմադրության քաղաքական-դիվանագիտական հաղթահարման նախաձեռնությունը՝ «*միջանցքի*» նկատմամբ վերահսկողությունից նրան զրկելու հեռանկարով: Իր հերթին, Ադրբեջանն իր վրա է թողել քաղաքական-տեղեկատվական ճնշումը Երևանի և նրան աջակցող գործընկերների վրա: Օրինակ, Ի. Ալիևի միջազգային հարցերով օգնական Հ. Հաջիևը *POLITIKO* պարբերականին 01.09.2024 թ. տված հարցազրույցում կոչ է արել Հայաստանից դուրս հանել ԵՄ Դիտարկման առաքելությունը, որն, ինչպես հայտնի է, իր հիմնական աշխատանքը կենտրոնացրել է Սյունիքի ուղղության վրա: Հաջիևի կարծիքով, ՀՀ-ի և ԱդրՀ-ի միջև սահմանազատման և սահմանագծման կառավարական հանձնաժողովների համատեղ աշխատանքի կանոնակարգման մասին փաստաթուղթը ստորագրելուց հետո ԵՄ առաքելությունը ոչ

միայն «*կորցնում է իր իմաստը*», այլև պետությունների միջև լարվածության նոր բռնկման «*սպառնալիքներ է ստեղծում*»: Այս գաղափարի հետ լիովին համաձայն են Մոսկվայում՝ վաղուց պնդելով, թե եվրոպական այդ առաքելությունը ոչ թե դիտորդական պարտականություններ է կատարում, այլ իրականացնում է հետախուզական գործունեություն՝ «*ի շահ Արևմուտքի*»:

Դրանով իսկ Մոսկվան և Բաքուն վերստին համակցված աշխատանք են նախաձեռնել՝ ուղղված հայկական Սյունիքի մարզում արևմտյան ներկայության վարկաբեկմանը և Երևանին, այսպես կոչված, «*Զանգեզուրի միջանցքի*» զիջման պարտադրմանը, որտեղով էլ, ըստ մտահղացման, պետք է դեպի թուրքական «հանգույց» և ապա՝ Եվրոպա անցնի Ռուսաստանի գազային երթուղին:

Դատելով Ն. Փաշինյանի՝ 31.08.2024 թ. Երևանում կայացած մամուլի ասուլիսում հնչեցրած մտքերից, Հայաստանի վարչապետը մերժել է հայ-ադրբեջանական բանակցություններում Ռուսաստանի միջնորդության մասին Վ. Պուտինի առաջարկությունը: Դա կարող է նշանակել, որ Երևանը հրաժարվել է *«միջանցքի»* գործելու՝ ՌԴ պահանջած եղանակներից և պատրաստ է Սյունիքի հաղորդակցություններն ապաշրջափակել միայն սեփական պայմաններով և իր հարավային մարզի նկատմամբ ամբողջական ինքնիշխանության պահպանմամբ: Ն. Փաշինյանի նման պահվածքը վկայում է, որ նա օգտվում է Արևմուտքի և, առաջին հերթին, ԱՄՆ-ի աջակցությունից: Իսկ Վաշինգտոնը մի շարք պատճառներ ունի, որպեսզի առնվազն ներկա փուլում պահպանի հայկական վերահսկողությունը Սյունիքի միջով ենթադրյալ երթուղու նկատմամբ:

Նախ. ԱՄՆ-ը տարիներ շարունակ աշխատել է դեպի Եվրոպա ռուսաստանյան բոլոր գազային երթուղիների շրջափակման ուղղությամբ, ուստի և հազիվ թե թույլ տա, որպեսզի Մոսկվան էներգառեսուրսների փոխադրման համար «հնարավորությունների նոր պատուհան» բացի Հարավային Կովկասում:

Երկրորդ. կոտրելով Մոսկվայի «հայ-ադրբեջանական» նոր խաղը, ԱՄՆ-ը ոչ միայն կսրի ՌԴ քաղաքական-տնտեսական իրավիճակը, այլև՝ ԵՄ-ին ամբողջովին կախվածության մեջ կդնի իր հեղուկ գազից, իսկ Թուրքիան կզրկվի «հաբ նախաձեռնողության» միջոցով չափից դուրս քաղաքական և ֆինանսա-տնտեսական անկախություն ձեռք բերելու հնարավորությունից:

Վերջապես, երրորդը. քաղաքական-աշխարհագրական առումով Սյունիքը երկարաժամկետ հեռանկարում գրավիչ է նաև Վաշինգտոնի համար և այդ տարածքի նկատմամբ վերահսկողությունը ԱՄՆ-ին թույլ կտար որոշակի սցենարի պարագայում ապահովել իրանական էներգառեսուրսների հասանելիություն իր համար, ինչպես նաև կառուցել իր շահերն ու ազդեցությունը Չինաստանի հովանու ներքո անցկացվող «Միջին անդրկասպյան ուղի» հեռանկարային մեգանախագծի և Հնդկաստանի կողմից ձևավորվող «Հյուսիս–Հարավ» անդրմայրցամաքային երթուղու վրա:

Հաշվի առնելով այս գործոնները, միանգամայն հավանական է, որ Վաշինգտոնը, անկախ ԱՄՆ-ում ընտրությունների արդյունքներից, կավելացնի իր ազդեցությունը Հարավային Կովկասի վրա, աջակցություն կցուցաբերի Ն. Փաշինյանի կառավարությանը և ճնշում կգործադրի Ի. Ալիևի վարչախմբի վրա՝ նպատակ ունենալով պարտադրել նրան հրաժարվելու ՌԴ-ի հետ գազային համագործակցությունից: Վրաստանի ընտրություններում արևմտամետ ուժերի հաղթանակի դեպքում Բաքվի վրա ճնշումը կհասնի իր գագաթնակետին: ԱՄՆ-ի հաշվարկներով, դա Բաքվին կստիպի հետքայլ կատարել Մոսկվայի հետ պայմանավորվածություններից ու սկսել քննարկել Սյունիքի հաղորդակցությունների շահագործման ամերիկյան տեսլականն ու առաջարկությունները՝ որպես ադրբեջանա-թուրքական ծրագրերի շրջանակներում ամենակարճ ցամաքային հաղորդակցության ձեռքբերման միակ հնարավորություն: Պարզ ասած, եթե Բաքուն Մոսկվայի ձեռքից չստանա խոստացված «*Զանգեզուրի միջանցքը*», ապա նույն նպատակով առքուվաճառքի է գնալու Վաշինգտոնի հետ: Այդ կապակցությամբ Երևանը, որը լիարժեք վստահություն է դրսևորում արևմտյան գործընկերների նկատմամբ, Սյունիքի հաղորդակցությունների հարցում հայկական ինքնիշխանությանը նրանց ներկայիս աջակցության պատճառով, պետք է չբացառի իրադարձությունների նման բարձր հավանականությունը:

Սյունիքի հաղորդակցությունների հիմնախնդրի լայն տեսադաշտը և «*Զանգեզուրի միջանցք*» թեմայով վերակենդանացվող պատումները հիմք են տալիս պնդելու, որ այդ տարածքի հարցը վաղուց արդեն դուրս է եկել հայ-ադրբեջանական հարաբերությունների շրջանակից և գտնվում է ուժերի համաշխարհային բևեռների աշխարհաքաղաքական դիմակայության առաջնագծում: Հետևապես, ճիշտ չէ այն դիտարկել բացառապես ՀՀ և ԱդրՀ ներքաղաքական գործընթացների պրիզմայի միջով, ինչպես նաև տարածաշրջանային օրակարգի համատեքստում: Հեռանկարի նման «նեղացումը» աղճատում է հիմնախնդրի էությունը և զրկում դրա զարգացման սցենարները հավաստիորեն կանխագուշակելու հնարավորություններից: